



218A

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23877
Փետրուար 15, 1978

Արժանաշնորհ
Տ. Վարդան Տ. Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Սխազահ Ժիական Խորհուրդի
Սիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Սաացած ենք 1978 Փետրուար 13 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած 2եր
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի չորս անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ հնթակայ մարմիններու վարչութեանց
առեւտարներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն քաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հարլզ Յովսէփեան, Կրտսեր
Ժիւան Յուսիկեան
Արթր Սիմոնեան
Կրէկորի Արքայամեան